

վիճակագրությանը բնախնդիր համադրություն մը, համայնագիտարանի ձեռով, անկարելի նկատուած արտակարգ մարդահամար մը, որ նկատի կ'առնէ կարելի եղածին չափ ժամանակակից բոլոր տուեալները: Հոն տեղ գտած են անջատ գլուխի տակ, Լիբանանի նորագոյն մեծ տագնապը, քաղաքացիական պատերազմի շուրջ, եւ ամոր երկարած գումները ներկայ ժամանակներու մէջ: Լիբանանեան շրջագծին մէջ, մեր եկեղեցագիտական տագնապին կապակցութեամբ խորաքափանց լոյսի տակ կը վերլուծուին հայ կուսակցութեանը դերն ու յարաբերութիւնները մեր համայնքը յազոյ բոլոր հարցերուն կապակցութեամբ:

Քիչ անգամ գիրք մը արդարացուցած է կոթողական բառին անվերապահ գործածութիւնը, ուր ծաւալը, նոյնութիւնն ու առարկայականութիւնը ա'յսքան ներդաշնակօրէն գիրար ամբողջացուցած են: Երախտաշատ գործ մը՝ որ կը հարստացնէ մարդկութեան պատմական տուեալներուն գանձարանը, գրանցելով հեղինակին համոզեալ վկայութիւնը ի միջի այլոց Հայոց կրած մահատակութեան վերաբերեալ:

ՆԱԶԱՐԷԹ ԹՕՓԱԼԵԱՆ

Փարիզ

«ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ՝ ԱՐՆԵՆԻՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՈՒ» - Հեղինակ՝ Ժան-Փիէր Վալոնը, 974 մեծադիր էջ, Ժանօթա-գրութիւններ, մատենագիտութիւն, ճիւղերու եւ տեղանուններու ցանկ: Հրատարակութիւն՝ Գրատուն Արտեմ Ֆայեարի, Փարիզ, 1994

ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Սիոնի 1995 ճունուար-փետրուար-Մարտ թիւին մէջ, «Ժառանգաւորացը Մեր Օրերուն» յօդուածին ակնարկելով, Գեր. Տ. Հմայեակ Նպս. Ինթոյեան իրաւացիօրէն հետեւեալ դիտողութիւնը եւ սրբագրութիւնը կը կատարէ, էջ 80ի մէջ ակնարկուած Վարդանանց Թատրերգութեան կապակցութեամբ յիշուած «Զլլթունի հերոս Յոնուզի Բարդուղիմէոս Մ. Վրդ. Թագագեանի» եւ Վասակի դերը կատարողին (ապա Հայր Հմայեակին) միջեւ տեղի ունեցած միջադէպի մասին.- «Ազատ Ինթոյեան ժառանգաւորը 1930ին Վարդանանց Տօնին Թատրերգութեան մէջ խաղարկած է Ներշապուհի դերը եւ ոչ թէ Վասակի դերը:»

ՆՍԲ.